ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ

Թեստային առաջադրանքի ձևերը	Հարցը կամ խնդիրը	Օրինակ
1. Ճիշտ պատասխանի ընտրություն	Նշեք ճիշտ պատասխանը	Ո՞րն է Պետական վերահսկողական ծառայության գործունեության նպատակը։ ☐ 1. Ապահովել վարչապետին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացումը։ ☐ 2. Ապահովել նախագահին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացումը։ ☐ 3. Ապահովել վարչապետին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և Կառավարության որոշումներով վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացումը։ (Պետական վերահսկողական ծառայության մասին ՀՀ օրենք, հոդված 4)
2. Այլընտրանքային ընտրություն	Պատասխանեք «Այո» կամ «Ոչ»	Ճի՞շտ է արդյոք, որ ՀՀ Սահմանդրությամբ Յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք։ Պատասխան՝ ☐ 1. «Այո» ☐ 2. «Ոչ» (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն հոդված 49)
3. Համապատասխանության որոշում	Դասավորե՛ք ըստ համապատասխանության՝ ձախ սյունակի տերմինները և աջ սյունակի մեկնաբանությունները:	1. Կոմպետենցիա՝ Ա. տեղեկությունների, հասկացությունների, մտքերի, փաստերի և հանգամանքների ամբողջություն, որն անհրաժեշտ է պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների արդյունավետ իրականացման համար. 2. Քաղաքացիական ծառայողների վերապատրաստում՝ Բ. գիտելիքների, ունակությունների, հմտությունների և վարքագծի ամբողջություն, որն անհրաժեշտ է պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների արդյունավետ իրականացման համար. 3. Մասնագիտական գիտելիք՝ Գ. քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում քաղաքացիական ծառայության պաշտոնի համապատասխան խմբի նույն ենթախմբում ընդգրկված քաղաքացիական ծառայության պաշտոն. 4. Հավասարազոր պաշտոն՝ Դ. քաղաքացիական

		ծառայողների մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների հետևողական և շարունակական կատարելագործում. ☐ 1. 1-Ա, 2-Բ, 3-Գ, 4-Դ. ☐ 2. 1-Բ, 2-Գ, 3-Դ, 4-Ա. ☐ 3. 1-Գ, 2-Դ, 3-Բ, 4-Ա. ☐ 4. 1-Բ, 2-Դ, 3-Ա, 4-Գ: («Քաղաքացիական ծառայության մասին» օրենք, հոդված 4, մաս 1, կետեր 6, 10, 11, 12)
4. Հաջորդականության որոշում	Դասավորե՛ք նորմատիվ իրավական ակտի կառուցվածքը ճիշտ հերթականությամբ:	Ա. Հիմնական մաս Բ. Նախաբան Գ. Եզրափակիչ մաս Դ. Անցումային դրույթներ ☐ 1. Ա, Բ, Գ, Դ. ☐ 2. Բ, Ա, Գ, Դ ☐ 3. Գ, Ա, Բ, Դ. ☐ 4. Ա, Գ, Դ, Բ: (Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենք, հոդված 13)